ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1726-Ա « 06 » ապրիլի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 4146-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի «Պատասխանատու ստորաբաժանում սահմանելու մասին» № 4146-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Երևանի քաղաքապետարանի մի շարք խոշոր ենթակառուցվածքային և քաղաքաշինական ծրագրերի շրջանակներում Համալրված իրականության (AR) և Վիրտուալ իրականության (VR) հիմքով թվային կրկնօրինակի ստեղծման, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ենթակայության հանրային շենքերի կանաչ և կայուն հավաստագրման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ) սահմանել որպես պատասխանատու ստորաբաժանում՝ հետևյալ կազմով.

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

Լուսինե Ջանազյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի մասնավոր գործառնությունների և ռենովացիոն ծրագրերի ղեկավար

Պատասխանատու ստորաբաժանման անդամներ՝

Ալինա Եղիազարյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի զարգացման և գործընկերության ղեկավար
Սվետա Հարոսյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի հանրային ներդրումային ծրագրերի ղեկավար

Վարդգես Հարությունյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի ճանապարհային ենթակառուցվածքների ծրագրերի ղեկավար
Մերի Հայրապետյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի հանրային շենքերի ծրագրերի ղեկավար
Տաթևիկ Մկրտչյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի գիտելիքի կառավարման ավագ մասնագետ»

2. Սույն որոշման կատարումը վերապահել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ